Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ՔԱՀԱՆԱ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՈՔ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԱԹՈՌՆԵՐԻ ՀԵՏ

Խորեն Ա Կաթողիկոսի օրոք եղբայրական սիրալիր ջերմ հարաբերություններ էին պահպանվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետության և Հայ Եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների միջև:

Նորին Սրբություն Տ. Խորեն Ա Կաթողիկոսի անթաքույց սերն ու բացառիկ վերաբերմունքը հանդեպ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունն ու Երուսաղեմի և Կ. Պոլսի Պատրիարքությունները, բացահայտվում են ոչ միայն Հայրապետական գործունեության ուրվագիծը տվող անդրանիկ կոնդակի, այլև պաշտոնական բազմաթիվ գրությունների մեջ: Խորեն Ա Կաթողիկոսի հարգանքն ու սերը հանդեպ նվիրապետական Աթոռները նկատելի է դեռևս իր եպիսկոպոսության շրջանի գործունեությունից իբրև տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և նախագահող Գերագույն Հոգևոր Խորհրդի:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Սահակ Խապայանը, ապրելով առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքներն ու արևմտահայության կոտորածների դառնությունները՝ անբաժան լինելով իր ժողովրդի ճակատագրից, բռնում է տարագրության ճամփան: Հաստատվելով Երուսաղեմում, ապա Դամասկոսում 1919 թ. իր հոտի հետ վերադառնում է Կիլիկիա, իր Աթոռը՝ Սիս: Վրա հասած 1920 թվականի վշտերն ու հուսախաբությունները, 15.000 մարաշցիների կոտորածը, Հաճնի պաշարումն ու հերոսամարտը, Սսի պարպումը, Այնթափի հերոսական ինքնապաշտպանությունը, կրկին անգամ ստիպում են բազմաչարչար Սահակ Կաթողիկոսին՝ իր ձեռքն առնելու պանդխտության ցուպը: Տարագիր Կաթողիկոսն այս անգամ հաստատվում է նախ Կիպրոսում և ապա՝ Հալեպում: Սահակ Խապայան Հայրապետը, մտահոգ Կիլիկյան տարագիր Աթոռի ապագայով ու թափառական անհաստատ վիճակով, 1928 թվականի փետրվարին գրում է իր հայտնի «Կտակ»-ը՝ ուղղված Սփյուռքի հայությանը: Ցավով ու վշտով լցված՝ բոլորին հաղորդակից է դարձնում իր անօգնական, «անհույս» և «անլույս» Աթոռի աստանդական թափառումներին: Կիլիկյան Աթոռի նույն մտահոգություններով էր այդ օրերին ապրում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ն ու Մայր Աթոռը: Սիրիայի և Լիբանանի երուսաղեմապատկան վիճակները անապատան Կիլիկիո Կաթողիկոսությանը հանձնելու նպատակով Սահակ Հայրապետը դիմում է Գևորգ Ե Կաթողիկոսի բարեհաճությանը: Կիլիկյան Աթոռի թեմերի կազմակերպության այս հարցի մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպիսկոպոսը 1928 թ. դեկտեմբերի 25-ին նամակով Երուսաղեմի Ամենապատիվ Եղիշե Սրբազան Պատրիարքի գիտությանն է հանձնում շնորհազարդ Տ. Սահակ Կաթողիկոսի մտածումը:

«Սահակ Հայրապետի մտածումը հետևյալն էր, - գրում է Խորեն արքեպիսկոպոսը, - Լիբանանի մեջ Կիլիկյան թեմերի կազմակերպության համար Կիլիկիո Կաթողիկոսը կարիք ունի Երուսաղեմապատկան Բեյրութի մատուռի և Դամասկոսի եկեղեցու»: Նույն նամակով տեղակալ սրբազանը Ամենապատիվ Պատրիարքին տեղեկացնում է մի քանի ազգայինների ցանկությունը ևս: Նրանք էլ առաջարկում էին, որ ֆրանսիական հովանավորության տակ եղած Դամասկոսի, Բեյրութի և Լավոդիկիեի հոգևոր տեսչությունները իրենց եկեղեցիներով դրվեն Կիլիկիո Կաթողիկոսի իրավասության ներքո: 1929 թ. մարտի 26-ին Երուսաղեմի հայոց Պատրիարքի նախագահությամբ գումարված միաբանական ընդհանուր ժողովը, ընդառաջելով Էջմիածնի միջնորդությանը, միաձայն հավանությամբ, որոշում է Սիրիայի երուսաղեմապատկան թեմերը փոխանցել Կիլիկիայի Կաթողիկոսությանը: Այդ առիթով Խորեն արքեպիսկոպոսը, հանուն Կաթողիկոսի, հետևյալ նամակն է գրում Տ. Սահակ Խապայան Հայրապետին. *«Գերագույն Հոգևոր Խորհուրդը պատիվ ունի հայտնելու, որ Նորին Վեհափառությունը ուրախ է, որ իր առաջարկը դրական լուծում է ստացել և Սյուրիո սաղիմական իրավունքները փոխանցվել են Կիլիկիո Կաթողիկոսությանը:*

Գերագույն Հոգևոր Խորհուրդը ի սրտե ուրախ է, որ Կիլիկիո Աթոռի հոգևոր և նյութական պետքերը հոգալու համար Փարիզում կազմակերպվել է հանգանակիչ հանձնաժողով՝ Վսեմափայլ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, ինչպես հաղորդում է տեղի հոգևոր հովիվ Գերապատիվ Տ. Վոամշապուհ եպիսկոպոսը, և հույս ունի, որ հաջորդ հանգանակությունը հնարավորություն կտա Աթոռիդ տնտեսականը ապահովելու, որ կլինի հիմք նաև ամրացման ու զորացման նորա այլ ասպարեզների գործառնության համար:

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հաճությամբ նշելով Ձեր տածած անձնվիրությունն ու հավատարմությունն առ Ս. Եկեղեցին մեր և բարյացակամ, սրտալի և ակնածությամբ լի վերաբերմունքը դեպի ազգիս Վեհափառ Հայրապետն ու Հայրապետությունը և փոխադարձաբար հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի սերը, համակրանքն ու վստահությունը առ Ձեզ, կատարելապես հավաստի է, որ նույն ուղիղ բարոյապես պարտադիր կկացուցանեք նաև Ձեր հաջորդներին:

Մաղթելով Ձեզ արնշատություն, քաջառողջություն և Քրիստոսավանդ համբերություն ինչպես ցայսօր արիությամբ տանելու Ձեզ բաժին ընկած ծանր խաչը՝ հոգուտ Կիլիկիո վտարանդի և տառապյալ Ձեր հոտին:

Որդիական ակնածանքով և եղբայրական սիրո ողջույնով՝

Խորեն արքեպիսկոպոս

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ

12-ը օգոստոսի 1929 թ.

Մայր Աթոռ»:

1932 թ. նոյեմբերի 10-ին Էջմիածնում գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար տեղակալ Խորեն սրբազանը հունիսի 22-ին պաշտոնական գրությամբ հրավերներ է ուղարկում Կիլիկիո Տ. Սահակ և Բաբկեն աթոռակից Կաթողիկոսներին: Տ. Սահակ Հայրապետի հրահանգով իր աթոռակիցը այդ ժողովին պետք է ներկայացներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, սակայն ժամանակը և քաղաքական պայմանները թույլ չտվեցին Բաբկեն Կաթողիկոսին ներկա գտնվելու Էջմիածնում: Այդ ժողովին Կիլիկյան

Հոդուածը Ս Սոկոլովսկիյանցը մի քանի տարի մշակել է Հայաստանի Գեղարվեստի պետական թանգարանի գլխավոր տնօրեն (Մեսրոպ Թադևոսյան)

Աթոռը ներկայացնելու պատիվը վերապահվում է Խորեն արքեպիսկոպոսին: 1932 թ. Ազգային-եկեղեցական ժողովում Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի ընտրությունը որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, ջերմորեն է ընդունվում Տ. Սահակ և Տ. Բաբկեն աթոռակից Կաթողիկոսների կողմից: Ի պատասխան շնորհավորանքների, նորընտիր Խորեն Կաթողիկոսը 1932 թ. դեկտեմբերի 30-ին երկու Կաթողիկոսներին հասցեագրած իր ողջույնի խոսքում գրում է. «*Տանն Կիլիկիո Կաթողիկոսական և Երուսաղեմի ու Կ. Պոլսո Պատրիարքական Աթոռները առ այսօր մեծ դեր ունեն կատարելու ի սփյուռս աշխարհի տարածված հայ ժողովրդին իր Մայրենի Եկեղեցու ծոցում պահպանելու և Հայ Եկեղեցու վերակենդանացման ու զորացման աջակցելու առաջնարժեք գործում:*

Հոգիս հրճվում է և զորանում՝ տեսնելով հիշյալ Աթոռների և Մայր Աթոռի սիրո շաղկապը, որ Մեր օրով անշուշտ առավել պիտի զորանա, որով ծանր լուծս՝ բեռանս բաժանմամբ պիտի թեթևանա և քաղցրանա և հնարավոր դառնա կոչմանս մեծ պարտքը գոնե իվիք՝ ի կատար ածելու:

Մաղթում եմ, որ Տերը երկար կյանք պարգևի Ձեզ, գաղթականության ցուպն առած Այուրիո արյունաքամ ու տանջված հայ ժողովրդի բեկորները հուսադրելու, մխիթարելու, դաստիարակելու և անմամբ զորացնելու և Ձեր պատվական Աթոռակցին, իմ սիրելի հոգևոր եղբորս՝ կար և ուժ պարգևելու, իբրև երկրորդ Մովսես նոցա Ավետյաց երկիրը առաջնորդելու, որպեսզի իբրև ազգ ամբողջանանք և հոգևոր-ազգային զորավոր կեդրոն ունենանք ի մխիթարություն Մեր և Ձեր և համայն ազգի[1]»:

Ի պատասխան Խորեն Ա-ի հիշյալ նամակի, Տանն Կիլիկիո Կաթողիկոսները գրում են, որ Մայր Աթոռը վստահ կարող է լինել «*Մեր գործակցության և Մեր անվերապահ սիրույն և նվիրման հանդեպ Ս. Էջմիածնի*[2]»: Էջմիածնի և Կիլիկյան Աթոռի ջերմ սիրո և փոխադարձ նվիրումի անդրադարձն ենք գտնում 1932 թ. «Սիոն» ամսագրի հուլիս ամսվա խմբագրականի մեջ. «*...սփոփարար կետը համերաշխ սիրո, արդարամիտ վերաբերմունքի այն կապն է, որով անհա իրարու հետ կշարունակեն սրտակցած մնալ և երևիլ ընդհանրական Հայրապետության Մայր Աթոռը և Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը*[3]»:

Խորեն Ա Կաթողիկոսն իր հայրապետական անդրանիկ կոնդակում առանձնահատուկ սիրալիրությամբ է ողջունում Տ. Սահակ և Տ. Բաբկեն Կաթողիկոսներին: Անդրադառնալով Սիրիայում և Լիբանանում ապաստան գտած հայ ժողովրդի գաղթական զավակներին՝ գրում է. «*Հաճութեամբ տեղեակ ենք զբազմազան վաստակոց և աշխատանաց Ձերոց ի վերակազմութիւն Կաթողիկոսարանիդ, ի բացումն դպրոցաց և Աստուածահաճոյ հաստատութեանց առ Ձեզ և յամենայն քաղաքս և յաւանս, ուր բնակեալ և դադարեալ կան ազգայինք Մեր: Ուրախ ենք յոյժ ընդ վաստակ և ընդ յաջողութիւն Ձեր, զոր իմ իսկ սեպհական համարիմ*»:

Անթիլիաս ուղարկված Հայրապետական անդրանիկ կոնդակները Բաբկեն աթոռակցի հրահանգով ընթերցվում են իրենց հոգևոր իշխանության ներքո գտնվող եկեղեցիներում: Հայրապետական անդրանիկ կոնդակի առիթով Բաբկեն Կաթողիկոսը «Հասկ» ամսագրում «Էջմիածին-Անթիլիաս» հոդվածի մեջ գրում է. «*Այլևս զատ-զատ Աթոռներ չկան Հայաստանյայց Եկեղեցվո մեջ: Մի է Հայաստանյայց Եկեղեցին, մի է Հայոց Կաթողիկոսությունը, և Կաթողիկոսները գործակիցներ են իրարու, ինչպես որ մի է քահանայությունը կամ եպիսկոպո-*

---

[1] «*Հասկ*», *1933, փետրվար, էջ 9:*

[2] *Նույն տեղում, էջ 11:*

[3] «*Սիոն*», *1932 թ., հուլիս, էջ 1:*

սությունը, թեև բազում քահանաներ կամ եպիսկոպոսներ կան. նույնպես ալ մի է Հայաստանյայց Եկեղեցվո Կաթողիկոսությունը, թեև Կաթողիկոսական երկու Աթոռներ կան: Ասոնք գործակիցներ են իրարու և ոչ հակառակորդներ: Վերջապես ասոր համար է, որ Ն. Ս. Օծության առաջին կոնդակը հանդիսավորապես և հրճվանքով կարդացվեցավ Կիլիկիո Կաթողիկոսական թեմերու եկեղեցիներու մեջ: Էջմիածնի և Կիլիկիո Կաթողիկոսության պատմության մեջ նախընթաց չունի այս դեպքը[4]»:

Էջմիածնի և նվիրապետական մյուս Աթոռների միջև համագործակցության կապը կենդանի և գործոն պահելու նպատակով էր նաև արտասահման մեկնում Հայրապետական լիազոր ներկայացուցիչ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը: Նա հրահանգ ուներ Խորեն Ա Վեհափառ Հայրապետից՝ այցելելու նաև Անթիլիաս և իր ողջույնն ու սերը փոխանցելու Տ. Սահակ և Տ. Բաբկեն Կաթողիկոսներին: Կաթողիկոսական նվիրակը Անթիլիաս է հասնում 1935 թ. դեկտեմբերի 9-ին: Այստեղ նա առանձին տեսակցություններ է ունենում երկու Կաթողիկոսների հետ: Պատվիրակի և Բաբկեն Կաթողիկոսի միջև տեղի ունեցած առանձնազրույցներից մեկի ընթացքում Աթոռակիցը հայտարարում է, թե. «*...Կիլիկիո Աթոռը կպահվի Էջմիածնի Աթոռին համար և իր բոլոր եպիսկոպոսներով հավատարիմ է Ս այր Աթոռին*»:

Գարեգին արքեպիսկոպոսի և Բաբկեն Աթոռակցի միջև տեղի ունեցած մեկ ուրիշ զրույցի ընթացքում հարց է ծագում, թե ինչո՞ւ Հայրապետների անունները փոխադարձաբար չեն հիշատակվում Անթիլիասի և Էջմիածնի թեմերի եկեղեցիներում: Այս գաղափարը հավանության է արժանանում թե՛ Աթոռակցի և թե՛ պատվիրակի կողմից: Բաբկեն Կաթողիկոսն այս զրույցի ընթացքում հայտնում է իր պատրաստակամ վերաբերմունքը՝ Մայր Աթոռի համար միաբանություններ պատրաստելու վերաբերյալ[5]:

1936 թ. մարտի 29-ին, կիրակի օրը, Անթիլիասում, ձեռամբ Բաբկեն Աթոռակցի, կատարվում է մյուռոնօրհնեք: Կաթողիկոսը նոր օրհնված Մյուռոնին խառնում է Ս. Էջմիածնից բերված մի քանի Կաթողիկոսների կողմից օրհնված պատմական Մյուռոնները՝ ցույց տալու համար, թե «*մի է Հայաստանյայց Եկեղեցվո Նվիրապետությունը*»: Նոր օրհնված Սրբալույս Մյուռոնից Աթոռակիցը նվեր է ուղարկում Խորեն Ա Կաթողիկոսին՝ «*իբրև նշանակ եղբայրության, սիրո և համերաշխության նվիրապետական Աթոռներու*»:

Մյուռոնօրհնեքի հանդիսավոր արարողությունից չորս ամիս հետո, հուլիսի 9-ին, վախճանվում է Աթոռակից Կաթողիկոսը: Խորեն Ա Վեհափառ Հայրապետը սգում է՝ իր Օծակցի մահվան լուրն առնելով: Նույն՝ 1936 թ. հուլիսի 20-ին Սահակ Հայրապետը Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդի պաշտոնում նշանակում է Կիպրոսի առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանին: 1937 թ. «Սիոն» ամսագրի հունիս ամսի խմբագրականում գրվում է, որ արտասահմանում որոշ անձինք այն կարծիքին են, որ Էջմիածինը, գտնվելով դժվար պայմանների մեջ և լրիվ կերպով չկարողանալով գործադրել իր հոգևոր իշխանությունը, առաջարկում է ինչ-որ չափով թեթևացնել Էջմիածնի վրա ծանրացող պարտականությունները ի նպաստ Կիլիկյան Աթոռի՝ վերջինին տալով Մայր Աթոռի փոխանորդության տիտղոս: Խմբագրականում հոդվածագիրն ավելացնում է, որ այդպիսի մտածում երբեք հող չի գտել Անթիլիասում: Նման գաղափար չի հղացվել նաև հոգելույս Բաբկեն Կաթողիկոսի կողմից: Բաբկեն Կաթողիկոսը նույն հարգանքն ու կեցվածքը հանդեպ Ընդհանրական Հայրապետությունը ցուցաբերել է նույնիսկ

---

4 *«Հասկ», 1933 թ., նոյեմբեր, էջ 57:*

5 *Թորգոմ Վեհապետյան «Իրաւ հոգեւորականը», 1987, Բեյրութ, էջ 158:*

այն ժամանակ, երբ մի խումբ ամերիկահայեր դիմեցին իրեն, որ Աստվածաշնչի 1500-ամյա հանդիսությունների կազմակերպումը ստանձնի ինքը: Այս հարցի կապակցությամբ Կաթողիկոսը պատասխանում է. «*Մայր Աթոռս պատկանյալ գործ է*»: Հոդվածագիրը, շարունակելով, գրում է. «*Շատ ավելի լավ ճանաչել ենք այն պարկեշտությունը, որով, ինչպես բուն Աթոռական Սահակ Վեհը և Աթոռակից ողբացյալ Բաբկեն Կաթողիկոսը թե ինչպիսի հարգանք են տածել դեպի Ս. Էջմիածինը, ոչ մի ժամանակ երբեք չխորհելով ոտնձգության մասին դեպի Ընդհանրական Հայրապետությունը, որևէ ձևով կամ հանգամանքով*»:

Նույնն է հոդվածի հեղինակի կարծիքը Մայր Աթոռի մասին. «*Ընդհանրական Մայր Աթոռը չի դժգոհիր, երբ Կիլիկյան մասնավոր կաթողիկոսության Աթոռին հանդեպ ամենքս ցույց տանք ջերմ համակրանք և քաջալերական անվերապահ վերաբերմունք անոր զարգացման և զորացումին համար*[6]»:

1937 թ. կահիրեաբնակ Կ. Պոլսեցի տեր և տիկին Սիմոն և Մաթիլդ Գալըգճյանների նյութական օժանդակությամբ գնվում է Անթիլիասի Կաթողիկոսարանի կալվածը, որպես Եկեղեցու և ազգի սեփականություն: Անթիլիասի կալվածների գնման լուրը մեծ ուրախություն է պատճառում Խորեն Կաթողիկոսին: Այդ առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Ընդհանուր փոխանորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանին գրում է հետևյալը. «*Անհունապես ուրախ ենք, որ շնորհիվ այդ նվիրատվության ոչ միայն պիտի փարատվի ծերունազարդ Տ. Սահակ Կաթողիկոսի մտահոգությունն ու մխիթարե նրան, այլ և Տանն Կիլիկիո տարիներ տարագիր և աստանդական Կաթողիկոսական Աթոռը հաստատություն պիտի գտնե և՛ ներքնապես, և՛ արտաքնապես զորանալու ուղին պիտի բռնե:*

Բարերարների այդ գովության արժանի ձեռնարկը, ազատելով Ծերունազարդ Հայրապետին, Գերաշնորհությանդ և՛ Նորա, և՛ Ձեր բոլոր աջակիցներին որոշ հոգսերից, պիտի մեծ հնարավորություն տա կեդրոնացնելու ուշադրությունը դպրոցի, գրականության և եկեղեցական կյանքի զորացման և զարգացման վրա, որոնք այնքան կարևոր են տեղվույն հայ հատվածի ազգային ինքնուրույնության պահպանման և զարգացման համար:

Մաղթում ենք, որ Բարձրյալը զորավիգ լինի ծերունազարդ Հայրապետին և Ձեր բոլոր աջակիցներին, շարունակելու իրենց մեղվաջան և օգտավետ գործունեությունը, հոգուտ շինության և բարգավաճման Տանն Կիլիկիո Կաթողիկոսության:

Հայտնում ենք նաև Գերաշնորհությանդ, որ բարերար Գալըգճյան ամուսիններին օրհնության կոնդակ ենք ուղարկել Գահիրեի Եգիպտոսի թեմի Առաջնորդական փոխանորդ Գեր. Տ. Մամբրե եպիսկոպոսի միջոցով:

Հայրական սիրով և Հայրապետական օրհնությամբ

Աղոթարար
Խորեն Կաթողիկոս Ամենայն Հայոց

Կնիք
թ. 480
3 սեպտեմբերի 1937 թ.
Ս. Էջմիածին[7]»:

---

[6] «*Սիոն*», *1937 թ., հունիս, էջ 165:*

[7] «*Հասկ*», *սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 121:*

Երուսաղեմի Աթոռ

1930 թ. ապրիլի 27-ին, Երուսաղեմի հայոց Եղիշե Սրբազան Պատրիարքի մահից հետո, դժվարություններ ստեղծվեցին նոր Պատրիարքի ընտրության հարցում հատուկ կանոնադրություն չլինելու պատճառով: Երուսաղեմի երջանկահիշատակ Եղիշե Սրբազան Պատրիարքի ընտրությունը կատարվել էր Կ. Պոլսում 1921 թ., համաձայն Ազգային սահմանադրության: Սակայն 1917 թ. Երուսաղեմն արդեն գտնվում էր անգլիական տիրապետության տակ, ուստի և Ազգային սահմանադրությունն իր օրենքները չէր կարող տարածել Երուսաղեմի վրա: Անորոշ վիճակի մատնված պատրիարքական ընտրությունը քննության նյութ է դառնում ազգային եկեղեցական իշխանությունների և հայ մամուլի համար: Ո՞վ պետք է ընտրի Երուսաղեմի նոր Պատրիարքին, ա՞զգը, թե՞ մի բուռ միաբանություն: Այս հարցն էր, որ մնում էր անլուծելի: 1930 թ. մայիսի 5-ին միաբանական ընդհանուր ժողովում պատրիարքական տեղապահ ընտրված Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ Տ. Մեսրոպ եպիսկոպոս Նշանյանի գլխավորությամբ հունիսի 19-ին տեղի ունեցած միաբանական ընդհանուր ժողովը ձեռնարկում է պատրիարքական ընտրության նախապատրաստական աշխատանքները: Ժողովը փոփոխության է ենթարկում Երուսաղեմի Պատրիարքի ընտրության վերաբերյալ Ազգային սահմանադրության 4 հոդված: Այդ փոփոխված հոդվածների համաձայն, Երուսաղեմի Պատրիարքի մահվանից հետո, միաբանությունից պետք է ընտրվի տեղապահ: Պատրիարք հոր մահից 40 օր հետո տեղապահի կողմից հրավիրված նիստում գաղտնի քվեարկությամբ պետք է առաջադրվեն հինգ թեկնածու: Եվ միաբանական ընդհանուր ժողովը այս հինգ թեկնածուից առավել արժանավորին պետք է բազմեցնի պատրիարքական գահին: Հունիսի 19-ի ժողովը, նկատի ունենալով նաև այն փաստը, որ ամեն կողմից ցանկություն է հայտնվում, որ պատրիարքական ընտրության մեջ ազգի ձայնը լինի, նպատակահարմար է գտնում նոր Պատրիարքի ընտրությունը ենթարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսի վավերացմանը: Սակայն այս որոշումը մերժվում է անգլիական կառավարության կողմից: Համաձայն նոր կանոնադրության, 1931 թ. հունիսի 16-ի միաբանական ընդհանուր ժողովը Երուսաղեմի Պատրիարք է ընտրում Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին: Նորընտիր Պատրիարքին 1931 թ. օգոստոսի 4-ի 238 գրությամբ իր շնորհավորանքներն է բերում Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալ Տ. Խորեն արքեպիսկոպոսը: Սույն գրության մեջ տեղակալ սրբազանը շեշտում է, որ Տ. Թորգոմ Պատրիարքը *«ըստ ամենայնի կարդարացնի Մեր և ընտրողների հույսերն ու օգտակար գործունեությունը նվիրաբերելով հայության նվիրական սրբավայր Երուսաղեմի Ս. Հակոբյանց ուխտի բարոյական և նյութական բարգավաճման»*[8]:

Խորեն սրբազանն իր մեկ ուրիշ՝ օգոստոսի 12-ի թիվ 250 նամակում, ուղղված Թորգոմ Պատրիարքին, գրում է, որ *«այս անգամվա պատրիարքական ընտրությունը, ըստ ձևի, սահմանափակ էր, պակասում էր ազգի ձայնը, ազգային երեսփոխանական ժողովի մասնակցությունն ու որոշումը: Հանգամանքների և ստեղծված պայմանների հետևանքով, միաբանությունն է միայն, որ յուրովի*

---

8 *«Սիոն», 1931 թ., էջ 286:*

կատարել է ընտրությունը, սակայն նույն միաբանությունը հեռատեսությունն է ունեցել խորապես գիտակցելու այդ հանգամանքը և յուր քվեները կենտրոնացրել է այնպիսի մեկի վրա, որին անպայմանորեն միաձայնությամբ կընտրեր ազգի ընտրյալ ներկայացուցիչներից կազմված հեղինակավոր ազգային-եկեղեցական ժողովը[9]*»:*

Պատրիարքական գահ բարձրանալով՝ Թորգոմ արքեպիսկոպոսը 1931 թ. 9 դեկտեմբեր թվակիր նամակով Մայր Աթոռին տեղեկացնում է պետության կողմից իր ընտրության հաստատման մասին՝ միաժամանակ հավաստելով նաև իր սերն ու նվիրումը Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության հանդեպ: Իսկապես, որ Թորգոմ Պատրիարք Գուշակյանն իր գահակալության տարիների ընթացքում հարգանք ու հավատարմություն ցուցաբերեց հանդեպ Մայր Աթոռ ու Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Բարեխղճությամբ ու սրտացավորեն կատարեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից իր վրա դրված պարտականությունները: 1934 թ. Խորեն Ա Կաթողիկոսը նրան է հանձնարարում Աստվածաշնչի 1500-ամյակի հոբելյանական հանդիսությունների ղեկավարումն ու կազմակերպումը, իսկ 1937 թ. Հայրապետական կոնդակով նշանակվում է Հայ Եկեղեցու բարեկարգության վերաբերյալ Սփյուռքի հայության կարծիքներն ու նկատառումները Մայր Աթոռ հաղորդելու պատասխանատու պաշտոնին: Երուսաղեմի արժանընտիր գահակալը հարգանք ու սեր ներշնչեց սփյուռքահայերի մեջ՝ վեհափառ Հայրապետի հրահանգով գաղութահայությանը այցելության ելած Հայրապետական պատվիրակի անձի ու գործի նկատմամբ. *«Պետք է լսեն կիրքերը, պետք է ամենեն ավելի և բոլոր կողմերուն վրա իշխե գիջողության ոգին: Պետք է ամենքը բոլորվին Մայր Աթոռի Առաքյալին շուրջ և լսեն անոր խաղաղության խորհուրդները... Նվիրակը պետք է երգը իր շրթունքին վերադառնա Հայաստան, ի Ս. Էջմիածին, Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին հաղորդելու համար Սփյուռքի հայության որդիական համբույրն ու հարգանքը*[10]*»:*

Բազմաթիվ և բազմատեսակ են Թորգոմ Պատրիարք Գուշակյանի գործնական նախաձեռնությունները հօգուտ Էջմիածնի և Ընդհանրական Հայրապետության: Այդ մասին է վկայում «Սիոն» ամսագրում տպագրված նրա ճառի հետևյալ տողերը. *«Ուրախ ենք, որ այս առթիվ Մեր թեմական ամբողջ ժողովուրդը, որ Պատվական Միաբանությանդ հետ արդեն չորս տարիներե ի վեր սիրով կհատուցանե «Լուսավորչի Լումայ»-ի կարևոր տուրքը, այս անգամ ևս մեծ եռանդով մասնակցեցավ Ս. Էջմիածնի տաճարի նորոգության հանգանակության, ջերմորեն տպավորված՝ Նորին Սրբազնության սրտաշարժ կոչերեն*[11]*»:*

Պատրիարք Հայրը ոչ միայն իր խոսքով, այլև գործելակերպով ու կեցվածքով փարված մնաց Էջմիածնի անփոխադրելիության և անշարժության գաղափարին: Իր գահակալության տարիներին Էջմիածնի գերագահության և անսասանությանն ի նպաստ արժանահիշատակ տողեր գրվեցին «Սիոն»-ի էջերում. *«Հոգևոր վերադիտողության գործը, որ պաշտոնն է Մայր Աթոռո, իր Պատվական Գահակալը ահա կկատարե որքան խոհական՝ նույնքան քաջարթուն կերպով: Պետք չէ*

---

9 *«Սիոն», 1931 թ., էջ 319:*

10 *«Սիոն», 1936 թ., հոկտեմբեր:*

11 *«Սիոն», 1936 թ., հունիս, էջ 163:*

շարժել պատվանդանը, այսինքն ժողովուրդին անխախտ սիրույն գրավականը դեպի Լուսավորչի նվիրական գահը որևէ չափով, որևէ կերպով[12]»:

1936 թ. Թորգոմ Պատրիարք Գուշակյանի գործունեությունը և վաստակը գնահատվեց Խորեն Ա Կաթողիկոսի կողմից՝ արժանացնելով նրան Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ակադեմիկոս խաչի:

Կ. Պոլսի Աթոռ

Մեր ուսումնասիրությունների ընթացքում թեև քիչ փաստաթղթերի հանդիպեցինք, որոնք կարող էին լիարժեք ու համակողմանի տեղեկություններ տալ ու լուսաբանել 1932-1938 թթ. Խորեն Ա Կաթողիկոսի օրոք Ընդհանրական Հայրապետության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կ. Պոլսի Աթոռի հարաբերությունների մասին, սակայն Նորին Սրբության և Ամենապատիվ Պատրիարք Սրբազան Հոր միջև նամակագրական կապերը և բազմաթիվ արխիվային վավերագրերից ու պարբերական մամուլից ունեցած մեր ընդհանուր տեղեկությունները վկայում են, որ երկու Աթոռների կապը բարեկամական է եղել:

1932 թ. Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար մյուս Աթոռների հետ միասին տեղակալ Խորեն արքեպիսկոպոսը հատուկ հրավեր է ուղարկում նաև Կ. Պոլսի Հայոց Մեսրոպ Պատրիարքին: 1934 թ. Հայրապետական պատվիրակ Գարեգին արքեպիսկոպոսը հատուկ հրահանգ ուներ Կաթողիկոսից՝ այցելելու նաև պոլսահայությանը, իսկ Աստվածաշնչի 1500-ամյա հոբելյանական հանդիսակատարությունների առթիվ Խորեն Ա Կաթողիկոսն իր կոնդակում Երուսաղեմի Թորգոմ Պատրիարքին պատվիրում է կազմվելիք հանձնաժողովի մեջ ընդգրկել նաև Կ. Պոլսի պատրիարքության ներկայացուցչին:

Խորեն Ա Կաթողիկոսն իր հայրապետության վեց տարվա ընթացքում տարբեր առիթներով գրած իր կոնդակներում, ի թիվս մյուս Աթոռների, մշտապես հիշել է նաև Կ. Պոլսի Աթոռը: Պոլսում լույս տեսնող «Հայ խօսնակ» ամսագիրը, անդրադառնալով Խորեն Ա Կաթողիկոսի օրոք Էջմիածնի հարաբերություններին մյուս Աթոռների հետ, գրում է. «*Ն. Ս. Օծությունը սիրալիր հարաբերությունների մեջ եղավ Հայ Եկեղեցու մյուս Աթոռների հետ*[13]»: Իսկ Էջմիածնի և Կ. Պոլսի Աթոռների միջև բարեկամական կապի ապացույցն է այն, որ Խորեն Կաթողիկոսը լանջախաչ կրելու Հայրապետական տվչության իրավունքը վստահեց Կ. Պոլսի Մեսրոպ Սրբազան Պատրիարքին[14]:

---

12 *«Սիոն», 1937 թ., հունիս, էջ 165-169:*

13 *«Հայ խօսնակ», 1938 թ., մայիս, էջ 9:*

14 *Նույն տեղում:*